Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.12/[175064]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Մ. Դեյվիս	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Մ. Առաքելյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Լ. Հունանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Կ. Վարդանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ

Վ. Կարապետյան	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Ն. Մուսաելյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի բանկային օգնական
Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

1. Նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականների ամփոփում

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանի զեկույցը՝ նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վ. Գաբրիելյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանի, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի և «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող Գ. Պողոսյանի հետ համատեղ քննարկման առարկա դարձնել Ռիելթորական

կազմակերպությունների հարկման մեխանիզմների փոփոխության հարցը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

3) առաջարկել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանին սոցիալական ցանցերում մարքեթինգի և գովազդային ծառայությունների մասով համապատասխան վիճակագրությունը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

2. Շրջանառության հարկի ներդրման վերաբերյալ իրականացված մարզային հանդիպումների ամփոփում և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում տոկոսադրույքի փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ

(Հ. Ավագյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին՝ ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության միջոցով ստուգում իրականացնել միայն այն ընկերություններում, որտեղ հղի աշխատողների մասով առկա է աշխատավարձի կտրուկ աճ.

2) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ ներկայացնել տեղեկատվություն՝ հղիության նպաստների նկատմամբ հսկողության ընթացակարգերի և հետաքննչական գործերի մասին.

3) առանձին քննարկման առարկա դարձնել շրջանառության հարկի դրույքաչափի վերանայման հարցը:

3. Շրջանառության հարկ վճարողի հաշվառումը որպես ավելացված արժեքի հարկ վճարող և դրանից բխող խնդիրների վերաբերյալ

(Փ. Թադևոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին և ՀՀ ֆինանսների

նախարար Դ. Սարգսյանին՝ համատեղ քննարկել շրջանառության հարկ վճարողի հաշվառումը որպես ավելացված արժեքի հարկ վճարող և դրանից բխող խնդիրները և ըստ այդմ ներկայացնել լուծման առաջարկներ:

4. Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածում փոփոխություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

(Ի. Հովհաննիսյան, Տ. Սարգսյան)

Հարցի քննարկումը տեղափոխվեց խորհրդի հաջորդ նիստ:

5. «Նոր սերնդի» ՀԴՄ-ների ներդրման առնչությամբ ծագած խնդիրների վերաբերյալ

(Հ. Ավագյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանի հետ համատեղ քննարկել և առաջիկա ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնել համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ